


ԿՈՃԻՐՅԵՎ և ԿՐԻՈՂՅՈՎ-ՄՎՈՆ

ԻՆՁ Ե ԱՍՈՒՄ
ԳՅՈՒՂԱՏԵՑԵՍԱԿԱՆ
ԱՐՏԵԼԻ
ՆՈՐ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ



ԽԱՂՈՒ ԺՈՂՈՎՈՐԴ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿԶ., ՄՈՍԿՎԱ 1930



338.1K


4-

20007

A 3866

ԻՆՁ Ե ԱՍՈՒՄ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՐՏԵԼԻ ՆՈՐ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՍԿՎԱ

1930

Фурқ. Ў. С. И.

Главлит А—72774

Заказ № 2233

Тираж 10.000

Книжная ф-ка ЦИЗ'а СССР, Москва, Шлюзовая наб., 10.

ՀՈԺԱՐ ԿԱՄՔՈՎ

Կուլեկտիվ տնտեսությունները կամ կոլխոզները գոյություն ունեն մեզանում Հոկտեմբերյան հեղափոխության հենց սկզբից: Կոմունաները, արտելները և հողը միացած ուժերով մշակելու համար կազմակերպված ընկերությունները տարեցտարի ավելացել են: Բայց մի մի ժամանակ չի յեղել այնպիսի ձգտում դեպի կոլխոզները, ինչպես այս տարի: Մի շարք աշխատողներում համարյա բոլոր գյուղացիական տնտեսությունները կուլեկտիվացված են:

Ի՞նչ է նշանակում սա:

Սա նշանակում է, վոր չքավորների յեանից կոլխոզներն են լցվում միջակները: Սա նշանակում է, վոր միջակն էլ վերջապես հասկացավ, վոր իր ուժերով չի կարող բարձրացնել իր տնտեսությունը:

Շատ բան են սովորեցրել անհատականներին տարիներ գոյություն ունեցող՝ ամբողջ վոտքի կանգնած կոլխոզները: Պատահել է, վոր այս կամ այն կոմունան սկսել է աշխատել սկզբում հարևան անհատականների ծաղրի տակ: Բայց անցել է մի, յերկու կամ յերեք տարի և հա, մենք տեսնում ենք, վոր կոմունայում և՛ բերքը բարձր է, և՛ անասունները ավելի լավ գրության մեջ են, և՛ մարդիկ ավելի կուշտ և լավ կյանք են վարում:

Շատ բան են սովորել գյուղացի-անհատականները մեր խոշոր սովխոզներից։ Համեմատելով իր դաշտը սովխոզի դաշտի հետ, անհատականը ընկնում է մտածմունքի մեջ և ինքն իրեն հարց է տալիս։

— Այդ ինչիցն է, վոր իմ հողը համարյա վոչինչ չի տալիս, իսկ կողքի սովխոզի հաճարը ետպես բոյ յե քաշել։

Խոշոր կոլխոզներում, — իզուր չե, վոր դրանց անվանում են հացահատիկների գործարան, — անհատականը տեսնում է և՛ մեքենական մշակումն, և ավելի բարելավ սերմնացան, տեսնում է, թե ինչ է նշանակում վարել տնտեսությունը կանոնավոր կերպով։

Շատ բան են սովորեցրել անհատականին նաև մեքենա-տրակտորային կայանները։ Գյուղացիական հողաբաժնի վրա տրակտորը վոչինչ չի կարող անել, այնքան փոքր է այդ հողաբաժինը։ Ակամա անհայտառւնամ ելին գյուղացիական դաշտերի սահմանները, ուզես թե չուզես՝ մտցվում եր հողի հասարակական մշակումն։

Հանրայնացրած խոշոր տնտեսության առավելությունները ստիպեցին միջակին կայացնել իր վճիռը։

Հարկավոր է միացնել հողաբաժինները, վերացնել սահմանները և վարել մի ընդհանուր խոշոր տնտեսություն, — վճռում է անհատականը և մտնում կոմունա, արտել, ընկերություն։ Մտնում է իր հոժար կամքով։

— Հոժար կամքս վորն է, — ֆշշում է կուլակը, — գոռով են քշում։ Չես գնա, ամեն ինչ կխլեն, քեզ ել փողոցը կնետեն տկլոր։

Յեվ, դժբախտաբար, այս տեսակ դեպքեր քիչ չեն յեղել։ Հաճախ չափից անց յեռանդուն մարդուկները

վոչ մի միջոցի առաջ կանգ չեյին առնում, միայն թե իրենց ռայոնի կոլխոզնիկները թիվը մեծ լինի:

Գալիս է այս տեսակ քյալլադյոզը, ժողով է հրավիրում և ասում:

— Ով չի ցանկանում կոլխոզ մտնել, մենք նրան ապակուլակացման կենթարկենք և կզրկենք ընտրողական իրավունքից:

Վոչ վոք չի ուզում իրավագուրի լինել, ուստի բոլորն ել համաձայնվում են:

Մի շարք վայրերում սպառնացել են չքավոր և միջակ գյուղացիներին աքսորել, վորովհետև դրանք չեն ցանկացել հանրայնացնել իրենց անասունները՝ ընդհանուր անասնոց չլինելու պատճառով:

Քյալլադյոզները աշխատում են հոգուտ կուլակներին:

— Տեսնում եք, — թշուրում է կուլակը, — ահա ինչպես է վարվում ձեզ հետ ձեր Խորհրդային իշխանությունը: Ահա ինչ է ուզում ձեր կուսակցությունը:

Բայց վոչ կուսակցությունը և վոչ ել կառավարությունը չեն ցանկանում այդ: Վոչ կուսակցությունը, և վոչ ել կառավարությունը չեն ցանկացել մարդկանց զոռով կոլխոզները զջել: Կուսակցությունը խստորեն դատապարտում է քյալլադյոզությունը: Կուսակցությունը և կառավարությունը հեռացնում են սլաշտոնից այդ տեսակ ծառայողներին և դատի յեն մատնում:

Այս տարվա մարտի 15-ի իր դիմումի մեջ կուսակցության Կենտրոնական Կոմիտեն ասում է. մի շարք ռայոններում կոլեկտիվացման նախապատրաստական աշխատանքը և կուսակցական քաղաքականության հիմքերի համբերատար բացատրությունը ինչպես չքա-

վորներին, նույնպես և միջակներին, փոխարինվում ե բարձրից արձակած չինոֆեիկական հրահանգումներով:

Այսպիսով խախտվում ե Լենինի հայտնի ցուցմունքը այն մասին, վոր կոլխոզները կարող են կենսական և հաստատուն լինել միայն այն դեպքում, յերբ նրանք առաջ են գալիս հոժարակամության հիմքով: Խախտվում ե մեր կուսակցության 16-րդ կոնֆերանսի վորոշումը, վորը անթույլատրելի յե համարում ստիպողական միջոցները կոլխոզների կազմակերպության գործում: Խախտվում ե գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը, վորը հաստատված ե ժողկոմխորհի և ԽՍՀՄ ԿԳԿ-ի կողմից և վորտեղ ուղղակի ասված ե, վոր այս-ինչ գյուղի բատրակները, չքավորները և միջակները «հոժարակամ» միանում են և կազմում գյուղատնտեսական արտել:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԶԻ ՓՈԽԿԵԼ

Այն բոլոր քյալագոզները և չինոֆեիկները, վորոնք դռոցների, սպառնալիքների և ձերբակալության ոգնությամբ քշում եյին գյուղացիներին կոլխոզները, — նրանք դրանով խախտում եյին կուսակցության կամքը, խախտում եյին Վլադիմիր Իլյին Լենինի պատգամը: Այդ տեսակ խախտումները ստիպեցին կուսակցությանը կարգադրելու, վոր վ ե բ ջ տ բ վ ի մ ի շ ա ը ք տ ե դ ե ռ ու մ կ ո լ ե կ տ ի վ ա ց մ ա ն գ ո Ր ծ ու մ տ ե դ ի ու ն ե ց ող ս տ ի պ ող ա կ ա ն մ ե թ ող ն ե ռ ի կ ի ը ա ու մ ա ն ը (կուսակցության Կենտկոմի մարտի 15-ի դիմումը), բայց կոլեկտիվացումից, ար-

տելներից, կոմունաներից կուսակցությունը չի հրա-
ժարվել:

Ի դուր ելին կուլակները և նրանց պոչը կազմող-
ները շշնջում. — Ըհը... տեսան, վոր կոլխոզներից
վոչինչ չի դուրս գալիս ու հրաժարվեցին: Փոխեցին
քաղաքականությունը:

Ամենքի համար պարզ է, վոր կուսակցությունը
իր քաղաքականությունը չի փոխել: Կուսակցությունը
կոլում է նրանց դեմ, վորոնք այդ քաղաքականու-
թյունը անկանոն են տանում: Կուսակցությունը
պայքարում է կուսակցական գծի ծռումների դեմ, իսկ
այդ գիծը մնացել է առաջվանը՝ լենինյան գիծը:
Կենտրոնի գլխումը դատապարտելով ծռումները, միև-
նույն ժամանակ ասում է, վոր հարկավոր է միա-
ժամանակ համառ պայքար մղել գյուղա-
ցիությունը կոլխոզները ներգրավելու
համար, և հիմնվելով հոժարակամության
սկզբունքի և գոյություն ունեցող կոլխոզ-
ները ամբաջնելու վրա:

Իսկապես ունեն հարկավոր այն կոլխոզիկները,
վորոնց զոռով են մտցրել արտելի մեջ: Բռույցքի
յերկյուղից կատարված աշխատանքը աշխատանք չէ:
Այդ տեսակ կոլխոզը վոչ թե կբարձրացնե գյուղացի-
ների տնտեսությունները, այլ կքայքայե: Դրա համար
եւ կառավարությունը կարգադրեց, վոր չխանգարեն
հեռանալու արտելներից այն գյուղացի-
ներին, վորոնք իրենց կամքով չեն մտել
արտելի մեջ:

Շատ կոլխոզներ գոյություն ունեն միայն թղթի
վրա: Ինչի՞ յեն հարկավոր այդ տեսակ կոլխոզները:

Միայն այն տեսակ կոլխոզներն են հարկավոր, վորոնք խակապես ուղղում են աշխատել, բարձրացնել տնտեսությունը, ընդարձակել ցանքսը: Հարկավոր են այն տեսակ կոլխոզիկներ, վորոնք գիտակցորեն են մտել կոլխոզ, վորպեսզի աշխատեն ընդհանուր տնտեսության մեջ:

Գյուղացիներին հարկավոր է ներգրավել կոլխոզները վոչ թե ստիպելով, այլ համոզելով: Հենց այդ մասին է խոսում կուսակցության Կենտկոմի դիմումը, նույն այդ մասին է խոսում կուսակցության գլխավոր քարտուղար ընկ. Ստալինը իր «Գլխապտույտը հաջողություններից» հոդվածում: Յեւ վրացական տնտեսական արտելի նոր կանոնադրությունը ավելորդ անգամ հաստատում է կոլխոզները մտնելու հոժարակամությունը, յերբ ասում է. գյուղերի բաւորակները, չքավորները և միջակները հոժարակամ միանում և կազմում են գյուղատնտեսական արտել, վորպեսզի արտադրության ընդհանուր միջոցներով և ընդհանուր կազմակերպված աշխատանքով կառուցեն խոշոր կոլեկտիվ տնտեսություն:

ՀՈՂԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԱ

Գյուղացիները գնում են կոլխոզ, վորպեսզի ընդհանուր ուժերով կառուցեն տնտեսությունը: Բայց կոլխոզումն էլ կարելի չէ զանազան կերպով աշխատել:

Կոլխոզները յերեք տեսակի յեն. գյուղատնտեսական կոմունա, գյուղատնտեսական արտել և հողի

հասարակական մշակման ընկերություն: Զանազանությունը գրանց մեջ շատ մեծ է.

Ինչ է գյուղատնտեսական կոմունան: Դա մի տեսակ ընդհանուր մի մեծ ընտանիք է՝ իր ընդհանուր մեծ տնտեսությամբ: Կոմունայում ամեն ինչ ընդհանուր է. և՛ ամբողջ հողը, և՛ բոլոր մեքենաներն ու գործիքները, և՛ բոլոր մանր ու խոշոր անասունը, և՛ բոլոր տնտեսական շենքերն ու կայարանները: Ով մտել է կոմունա, նա բացի հասարակականից ուրիշ վորեւ սեփական տնտեսություն չպետք է ունենա: Նա չի կարող սեփական թռչուններ պահել, ունենալ սեփական այգի կամ լանջարանոց, սեփական կով: Կոմունայում ամբողջ տնտեսությունը ընդհանուր է:

Գյուղատնտեսական արտելում վե՛չ ամբողջ տնտեսությունն է ընդհանուր: Արտելի անդամը կարող է ունենալ իր կովը, այգին և լանջարանոցը, թռչուններ պահել և իր արտագրության արդյունքները կարող է ծախել գրսում՝ արտելից անկախ: Դրա համար արտելի յուրաքանչյուր անդամի համար թողնում են նրա ազարակը և այդ ազարակին կից հողը, դրանց մշակման համար անհրաժեշտ գործիքները, կովը և մանր անասունը:

Համաձայն կանոնադրության, գյուղատնտեսական արտելներում հանրայնացվում են բացի հողից՝ ամբողջ լանվոր անասունը, գյուղատնտեսական ինվենտարը, ամբողջ արդյունաբերող անասունը, սերմերի ամբողջ պաշարը, անասունների կերը այն չափով, վորչափ անհրաժեշտ է հանրայնացրած անասուններին պահելու համար, արտելի տնտեսությունը վարելու համար

անհրաժեշտ տնտեսական շենքերը և վերամշակման համար կարևոր բոլոր ձեռնարկները:

Արտելի անդամների կացարանները չեն հանրայնացվում:

Հողի հասարակական մշակման ընկերությունը, ինչպես յերևում է հենց անունից, ի նկատի ունի գլխավորապես հողի մշակությունը: Ընկերությունների մեջ հանրայնացվում են միայն վարելահողերը և այն մեքենաները, գործիքները և անասունները, վորոնք հարկավոր են այդ հողը մշակելու և բերքը հավաքելու համար: Բացի դրանից, մնացած բոլոր տնտեսությունը ընկերության անդամները վարում են անհատականորեն:

Յուրաքանչյուր կոլխոզնիկ պիտի իմանա, թե ուր է գնում ինքը: Այլ բան է կոմունան և այլ՝ արտելը: Կոմունան լավ բան է, բայց հարկավոր է ամեն անգամ լավ մտածել, թե արդյոք, իր ուժերին համապատասխանում է կոմունան: Ընդհանուր ժողովում այդ հարցը պետք է շատ լավ կշռադատել:

— Կուզենաք ընկերություն մտնել, ձեզ կոմունա քաշ կտան, — ոձի նման թշուով են կուլակները

Այստեղ ել քյալլագյոյները քիչ չեն աշխատել՝ գործը փչացնելու: Գյուղացիները գրվում են արտել, իսկ նրանց փոխադրում են կոմունա:

— Հանձնեցեք ձեր հավերը, կովերը, և շենքերը:

Յեվ հաճախ վոչ կոմունա եր դուրս գալիս և վոչ ել արտել: Այս կամ այն միջակը կամ չքավորը ցանկանում է արտել մտնել, բայց վախենում է կոմունայից:

Յեվ այստեղ մենք դարձյալ գործ ունենք վոչ թե կուսակցության գծի հետ, այլ այդ գծի ծնման հետ:

Մարդիկ հիմնել են արտել և ուրեմն կարիք չկա արտելը կոմունա դարձնելու: Գյուղացիները միացել և կազմել են հողի մշակման ընկերություն, — և վոչ վոք իրավունք չունի արտելի փոխադրելու այդ ընկերությունը:

Ուրիշ բան է, յեթե իրենք, կոլխոզի անդամները ցանկանում են փոխել կանոնադրությունը: Յեթե նրանք այնքան լավ են աշխատում, վոր նրանց համար հարմար է ապրել և աշխատել կոմունայով, — նրանք անցնում են կոմունայի կանոնադրությանը:

Կուսակցությունը կարծում է, վոր ներկա մոմենտում աշխատավոր գյուղացիության մեծամասնության համար միանալու ամենահարմար ձևը գյուղատնտեսական արտելն է:

Բայց մի քանի տեղերում այժմ դեռ ևս ժամանակը չե արտելներ հիմնելու: Շատ վայրեր կան մեզանում, վորտեղ, ինչպես ասում են, նապաստակի վոտն ել չի կպել: Այս տեսակ խուլ, մութ և յետամնաց ռայոններում դժվար է յերբեմն նաև արտել հիմնելը: Այս վայրերում և ռայոններում պետք է հիմնել հողի միասին մշակելու ընկերություններ:

ԿՈԼԽՈՋՆԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՈԳՈՒՏՆԵՐԸ

Վոչ մի կարիք չկա մարդկանց զոռով կոլխոզները մտցնելու: Բավական է հասկացնել գյուղացուն այն ոգուտները, վոր բերում է կոլեկտիվ տնտեսությունը, վորպեսզի գյուղացին ինքը, իր հոժար կամքով գնա կոլխոզ: Կոլխոզ-կոմունաները, արտելները և ընկերությունները բավական ժամանակ է վոր գոյություն

ունեն և վորտեղ նրանք կան, ամեն մի անհատական կարող ե համոզվել նրանց ոգտակարության մեջ: Բավական ե միայն համեմատել իրար հետ անհատականի և կոլխոզի դաշտերը կամ գյուղական նախիրը կոլխոզի նախիրի հետ:

Կոլխոզում հացահատիկները ավելի լավ են բանում, քան անհատականների դաշտում, վորովհետև կոլխոզը կարող ե ավելի լավ մշակել հողը: Անհատականի ուժերից բարձր ե և՛ բարելաված ցանքսը, և՛ քաղմաթիվ մեքենաները և կանոնավոր անասնաբուժությունը: Ել կարիք չկա ասելու, թե վորչափ հեշտ ե աշխատել մեքենաներով: Արորը և տրակտորային գութանը, հնձող մեքենան և մանգաղը, կալսող մեքենան և հասկ ծեծելու կամը, — միթե կարելի չե համեմատել դրանց իրար հետ: Շատ քիչ գյուղացիներ կան այժմ, վորոնք չեն հասկանում, թե ի՞նչն ե լավ և շահավետ:

Կամի ոգնությամբ մի բանվոր կարող ե կալսել մի դեզ, կամ ամենաշատը՝ մեկուկես դեզ, մինչդեռ կալսող մեքենայի ոգնությամբ մի որվա մեջ նա կարող ե կալսել 10 դեզ: Մեքենայով կալսելը համարյա տասն անգամ ավելի եժան ե նստում. փոխանակ 40 — 50 կոպեկի, հեկտոլիարը (հարյուր լիտր) նստում ե 5 կամ 7 կոպեկ:

Անհատական տնտեսության մեջ չի կարելի ինչպես հարկն ե ոգտագործել նաև բանող անասունը: Զորս—վեց հեկտար ունեցող փոքրիկ տնտեսության մեջ ձին շատ անգամ կանգնած անգործ ե մնում, վորչապ հասկանալի չե: Զին կարող ե հերկել վոչ թե չորս—վեց հեկտար, այլ տասն հեկտար: Այսպիսով իզուր կորչում ե նրա կերը, այսինքն իզուր կերակրում են ձիուն:

Յենթադրենք, վոր կա տասը տնտեսություն, ամեն մեկը ունի չորս հեկտար հող և մի ձի: Այդ տասը տնտեսությունը 40 հեկտարի համար ունի 10 ձի: Ձին կարող է հերկել տասը հեկտար, ուրեմն հարկավոր է ընդամենը չորս ձի: Դա նշանակում է, վոր նրանք իրար տեղը կերակրում են վեց ձի: Իսկ յեթե այդ բոլոր անհատականները միանան և արտել կազմեն, նրանք ստիպված չեն լինի ավելորդ ձիեր պահել: Մեծ արտելում կարելի չե պահել այնքան ձի, վորքան հարկավոր է գործի համար:

Անհատական տնտեսությունը դժվար է բարելավել: Ձեռ կարող վե՛չ ցանքսը բարեկարգել, վե՛չ բազմադաշտություն մտցնել և վո՛չ ել կաթնատնտեսություն սարքել: Գյուղացիները ամբողջ գյուղերով, ռայոններով, շրջաններով անցնում են հանրայնացրած տնտեսությանը:

Ստիպելը միայն փչացնում է գործը, այլև վախեցնում փախցնում է կոլխոզներից: Այնտեղ, վորտեղ չափազանց թեքել են փայտը, վորտեղ բանտարկում եյին միջակներին ու չքավորներին և ապակուլակացնում նրանց, — այդտեղ ստացվում եյին վո՛չ թե կոլխոզներ, այլ դարդ ու թալա: Սաբսափահար կոլխոզնիկները տասնյակներով սկսեցին հայտարարություն տալ և հեռանալ կոլխոզից: Մի-յերկու շաբաթից հետո այդ տեսակ կոլխոզից վո՛չինչ չի մնում: Բայց բավական եր ուղղել ծռումները, պատժել մեղավոր քյալլագյոզներին, կարգին ու հանգիստ բացատրել կոլխոզնիկներին գործի եյությունը և ահա, «փախչողները» սկսում են նորեն խմբերով հայտարարություն տալ կոլկոզ վերադառնալու համար:

կուլակները իզուր եյին ուրախանում: Վորտեղ ծռումները ժամանակին ուղղվում եյին, այնտեղ կոլխոզները վոչ միայն քայքայվում, այլ՝ ընդհակառակն, աճում ու ամրանում եյին:

ԿՈՒԼԱԿՆԵՐԸ ԴԵՄ ԵՆ ԿՈԼԽՈԶՆԵՐԻՆ

Յուրաքանչուր չքավոր, բատրակ, միջակ, հասկանալով այն ոգուտները, վոր տալիս ե նրան արտելը, սիրով գնում ե այնտեղ: Միայն կուլակները չեն ուզում արտելը, վորովհետև նրանք անելու գործ չունեն այնտեղ: Արտելում նրանք այլևս չեն կարող չքավորի շնքին նստել: Արտելում չքավորին ինքը, արտելն ե ոգնում: Արտելում չքավորը չի աղքատանա, յեթե նրա ձին սատկի կամ տունը այրվի: Կուլակը այլևս չի կարող նստել աշխատավոր գյուղացու շնքին: Դրա համար ել նա ամեն կերպ աշխատում ե փչացնել կոլխոզային շինարարությունը:

Իհնչպես կարող ե կուլակը համակրել արտելին, յերբ հենց արտելի կանոնադրության մեջ ասված ե, վոր արտելի նպատակն ե պայքարել իրա՝ կուլակի դեմ,

Արտելը, — ասված ե կանոնադրության մեջ, — հիմնվում ե նրա համար, վորպեսզի ընդհանուր աշխատանքով ստեղծվի խոշոր կոլեկտիվ տնտեսություն և այսպիսով ապահովվի իսկական և կատարյալ հաղթությունը կուլակի դեմ, աշխատավորներին շահագործողներին ու աշխատավորներին բոլոր թշնամիներին դեմ, ապահովվի իսկական և կատարյալ հաղթություն կարիքի ու մթության, տգիտության դեմ:

Հասկանալի յե, վոր կուլականերին արտել ընդունել չի կարելի: Յեթե արտելը կուլում ե նրա դեմ, իսկ նա արտելի դեմ, ապա ուրեմն թողնել նրան արտել՝ այդ միևնույնը կլինի, յեթե գալին թողնենք վոչխարի հոտի մեջ: Կուլակը աշխատելու յե ամեն կերպ քայքայելու արտելի գործը: Դրա համար ել կանոնադրութունը ասում ե. արտելին անդամ կարող ե ն դրվել բոլոր աշխատավորները, սկսած 16 տարեկան հասակից: Արտել չեն ընդունվում կուլակները և ընտրողական իրավունքներից դրկվածները:

Դա նշանակում ե, վոր 16 տարին լրացած բոլոր աշխատավորները կարող են անդամագրվել արտելին և վոչ վոք իրավունք չունի արգելելու նրանց այդ բանում: Բայց յեղել են դեպքեր, յերբ չքավորների և մանավանդ բատրակների առաջ փակել են արտելների դռները: Վերցնում են իրենց ձեռքը արտելը ունեորները և կուլակները ու ասում.

— Ինչո՞ւ պիտի մենք տիկոր մարդկանց արտել ընդունենք:

Յեղել են նաև դեպքեր, յերբ անձնական թշնամության պատճառով չեն ընդունել չքավորներին արտել և մինչև իսկ այսպիս ասած ասակուլակացրել են նրանց:

Այդպիսի արարքները անթույլատրելի յեն և մեղավորները խստիվ պիտի պատժվեն:

Հաճախ գյուղացուն չեն ընդունում կոլխոզ միմիայն նրա համար, վոր նրա հայրը կուլակ ե յեղել,

չնայելով վոր վորդին յեղել ե պարտիզան (կամավոր կովող), կարմիր բանակային, մասնակցել ե քաղաքացիական կռիւներին: Կանոնադրությունը բացառություն ե անում այն ընտանիքների անդամների համար, վորոնք տվել են խորհրդային իշխանութեանը նվիրված կարմիր պարտիզաններ, կարմիր, բանակայիններ և կարմիր նավաստիներ (նասարակ զինվոր կամ հրամկազմի կովողներ), գյուղական ուսուցիչներ և ուսուցչուհիներ, — յեթե նրանք յերաշխավորում են իրենց ընտանիքի անդամների համար:

Բայց առանձին դեպքերում կարելի յե ընդունել նախ չքավորին և միջակին: Յեթե չքավորը կամ միջակը կոլխոզ մտնելուց առաջ կմորթե կամ կծախսե իր անասունը, կծախսե իր ցաքանը և գութանը, շուկա կհանե ծախելու ցանքսի համար պաշարած սերմնացուն, — այդ տեսակ չքավորին կամ միջակին արտելը կարող ե չընդունել: Յեվ իսկապես, ով արտել մտնելուց առաջ չար դիտավորութեամբ քայքայում ե իր տնտեսությունը, — վնասում ե վոչ միայն իրեն, այլ և ամբողջ արտելին: Այդ տեսակ կոլխոզիկներ արտելին պետք չեն:

ԿՈՒԼԱԿԻՆ ԱՐՏԵԼ ԶԹՈՂՆԵԼԸ ՔԻՉ Ե, ՆՐԱՆ ՊԵՏՔ Ե ՆԱՅԵՎ ԱՊԱԿՈՒԼԱԿԱՑՆԵԼ

Կուլակին արտել թողնել չի կարելի: Քիչ դեպքեր չեն յեղել, յերբ կուլակները առել են արտելը իրենց ձեռքը և հիմնել են իրենց կուլակային «կոմունաները»: Այդ տեսակ «կոմունաները» կամ «արտելները» ավելի վատ են յեղել, քան անհատ կուլակները:

Բավական ե հիշել, թե ինչեր են արել կուլակ-
ները, յերբ նրանց հաջողվել է ներս խցկվել գյու-
ղական խորհուրդների մեջ:

Բայց կուլակներին արտել չընդունելը դեռ ևս քիչ
է: Յեթե նրանց ձեռք չտաս, թողնես նրանց իրենց
հողը, անասունը, մեքենաները, կուլակները ամեն
կերպ կվնասեն կոլխոզի գործը: Կուլակին վոչ միայն
չպետք է թողնել կոլխոզ, այլ և պետք է ապակու-
լակացնել նրան, զրկել նրան կոլխոզին վնասելու
ամեն հնարավորությունից: Դրա համար ել կառավա-
րությունը 1930 թվի փետրվարի 1-ի դեկրետով վո-
րոշել է. համատարած կուլեկտիվացման ու-
յոններում վերացնել այն որեւէ, վորով
թույլ է տրվում հողը աճուրդով վերցնել
և վարձու աշխատանք թույլ տալ գյուղա-
ցիական անհատական տնտեսուհիների մեջ:

Իրավունք տալ շրջանային գործկոմիտե-
րին և ինքնավար հանրապետությունների
կառավարություններին կիրառել այդ ու-
յոններում բոլոր անհրաժեշտ միջոցները
կովեկուլ կուլակության դեմ՝ գրավելով
հարկավոր դեպքերում կուլակների կարո-
ղությունը և արտաքսելով նրանց վորոշ
ույոնների և շրջանների սահմաններից:

Կուլակային տնտեսություններից գրա-
ված ունեցվածքը, բացի այն մասից, վորով
պիտի հատուցվի կուլակի պարտքը պետու-
թյանը կամ կոոպերատիվ հիմնարկություն-
ներին, պիտի տրվի կոլխոզներին՝ անբա-
ժանելի ֆոնդերը մտցնելու համար, վոր-

պէս չքավորներ ի և բատրակներ ի վճար՝
կոլխոզը մտնելու համար:

Սակայն ամեն տեղ ապակուլակացումն չպետք է
կատարել: Վորտեղ համատարած կոլեկտիվացում չկա,
այնտեղ չի կարելի կուլակներին ապակուլակացնել:
Այս տեսակ ապակուլակացումն արգելում են թե մեր
կուսակցությունը և թե կառավարությունը:

Բայց այդ չի նշանակում, թե այնտեղ կուլակին
պետք է փայփայել:

Այնտեղ պետք է կռվել կուլակի դեմ, բայց այլ
միջոցներով: Նրան կարելի չէ ծանրաբեռնել բարձր
հարկերով, խլել նրանից հողը, յեթե նա չի ցանում,
անխնա հարվածել, յեթե փորձեր անե վնասելու մեր
տնտեսությանը: Պետք է գործ դնել այն, ինչ վոր
կոչվում է սահմանափակելու քաղաքական-
նություն: Քանի դեռ ռայոնի տնտեսությունները
հանրայնացրած են Բուլ ձևով, կուլակը մնում է:
Այն ռայոնում, վորտեղ հանրայնացրած են բոլոր
տնտեսությունները, այսինքն ուր կիրառված է հա-
մատարած կոլեկտիվացումը, — կուլակներին
պետք է ապակուլակացնել, այդ ռայոնում կուլա-
կությունը պիտի վոչնչանա վորպէս դա-
սակարգ:

ՀԱՐԱՅՆԱՑՆԵԼ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

— Բայց գուցե, — կասեն վոմանք, — բավական է
գրավել կուլակների կարողությունը, խլել նրանց հողը,
բաժանել այդ բոլորը չքավորներին և բատրակներին
և այլ ևս կուլակներ չեն լինի:

Դա ճիշտ չի: Քանի գոյություն ունի անհատական
փոքրիկ տնտեսությունը, չի կարելի վոչնչացնել կու-

լակությունը վորպես դասակարգ։ Կապակուլակացնենք այս կուլակներին, նորերը յերևան իզան։ Միայն այն դեպքում, յերբ ապակուլակացումը կատարվում է կոլեկտիվացման հետ միասին, կուլակությունը վորպես դասակարգ կարելի չէ վոչնչացնել։ Դրա համար ել կուլակների ինվենտարը և հողը չեն բաժանվում չքավորների և բատրակների մեջ, այլ անցնում են կոլխոզին։ Կուլակների հողը, ինվենտարը և բանոց անասունը հանրայնացվում են։

Բայց մենակ կուլակների յեղած-չեղածով բան չի դուրս գա։ Վորպեսզի ստեղծվի խոշոր անասնաւթյուն, կուլակների անասունները և մեքենաները քիչ են։ Հարկսովոր է հանրայնացնել արտելի անդամների բոլոր անասունը և մեքենաները։

Իհարկե, արտելը կարող է ձեռք չտալ իր անդամների մեքենաներին և ձիերին, բայց այն ժամանակ նա պետք է առնե նոր ձիեր և նոր մեքենաներ։ Վճարողից պիտի նա միջոցներ գտնի դրա համար միայն իր անդամների մեջ։ Հետևաբար ավելի նպատակահարմար է հանրայնացնել արտելի անդամների ունեցած ձիերը և գործիքները։

Կուլակները և նրանց պոչերը, համոզելով գյուղացիներին ծախելու իրենց կարողությունը, ասում եյին.

— Կզնաք արտել, — կառավարությունը ամեն ինչ կտա ձեզ։

Մի քանիսը ընկել են այդ ցանցի մեջ ու ծախծխել իրենց կայքը։ Ո՞վ է վնասվել դրանից։ Հենց իրենք։ Ծիծաղելի կլինեք մտածել, վոր կառավարությունը կունենա մեքենաների և բանոց անասունի այնպիսի պաշար, վոր կարող լինի բավարարել Միու-

Թյան բոլոր տնտեսությունները: Արտելը կարող ե
ստանալ արտադրության միջոցներ,—գործիքներ, մե-
քենաներ, բանող անասուն — միմիայն իր անդամնե-
րից՝ հանրայնացման միջոցով:

ԲԱՆՈՂ ԱՆԱՍՈՒՆԻ ՅԵՎ ԻՆՎԵՆՏԱՐԻ ՀԱՆՐԱՅՆԱՑՈՒՄԸ

Բանող անասունի և ինվենտարի հանրայնացումը
առաջնակարգ կարևոր գործ ե: Այդ գործում քիչ
ծուռմաներ և աղավաղումներ չեն յեղել: Հանրայնացնում
եյին բոլոր անասունը — և՛ բանող և՛ կաթնատու,
հանրայնացնում եյին միակ կովը: Նույնիսկ թռչուն-
ները — հավերը, սագերը:

Ո՞ւմ պահանջով եր կատարվում այդ կուսակցու-
թյան, կամ գուցե արտելի կանոնադրությունն եր պա-
հանջում այդ: Վե՛հ: Հարկավոր եր վորոշ քյալագող-
ներին՝ վորոնք կարգին չեյին ըմբռնում թե ինչ են
անում, և կամ կուլակների գաղտնի կողմնակիցներին,
վորպեսզի սպանեն գյուղացիներին ցանկությունը՝ կոլ-
խոգ մտնելու:

Ահա թե ինչ ե ասում այդ առթիվ կուսակցու-
թյան կենտկոմի ղեմումը: «Զթույլ տալ փոխա-
դրել գյուղատնտեսական արտելները գյու-
ղատնտեսական կոմունաների՝ առանց
շրջանային կոլխոգմիության կամ շրջանա-
յին գործկոմների հաստատության: Դադա-
րեցնել կացարանների, մանր անասուն-
ների, թռչունների, վոչ-ապրանքային կաթ-
նատու անասունների ստիպողական հան-
րայնացումը»:

Նույնն ե ասում և գյուղատնտեսական
արտելի կանոնադրությունը. «հանրայնաց-

վուժմ են ամբողջ բանող անասունը, գյուղատնտեսական ինվենտարը, բոլոր ապրանքային-արդյունավետ անասունը, բոլոր սերմնային պաշարը և կերի միջոցները՝ համայնացրած անասուններն ահապահության անհրաժեշտ չափով, տնտեսական այն շենքերը, վորոնք անհրաժեշտ են արտելի տնտեսությունը վարելու համար, և վերամշակության բոլոր ձեռնարկները»։

Դա նշանակում է, վոր կարելի չե հանրայնացնել միայն բանող անասունը,—ծիյերը, յեզները, վորոնք հարկավոր են, վորպես քաշող ուժ։ Մնացած անասուններից հանրայնացվում են միայն ապրանքային, արդյունավոր անասունները, այսինքն այնպիսիները, վորոնք բազմացվում են՝ շուկայում վաճառելու համար։ Որինակ, յեթե մի վորեն ռայոնում գյուղացիները պարապում են անասնապահությամբ,—սահում են վոչխարի հոտեր, տասնյակներով կովեր,—այնտեղ այդ անասունները պիտի հանրայնացվեն։ Բայց չի կարելի հանրայնացնել մի հատիկ կովը կամ մի քանի վոչխարը։ Յեթե տնտեսության մեջ կա վոչ թե մեկ, այլ մի քանի կով, չի կարելի հանրայնացնել բոլոր կովերը, մեկը պետք է թողնել արտելի անդամի և նրա ընտանիքի պետքերի համար։

Հանրայնացրած կաթնատու անասունը, վոր վերցված է բազմակով տնտեսություններից, կազմում է արտելի նախիրը։ Արտելը ելի կարող է դրսում առնել կովեր և հիմնել կաթնային տնտեսություն։ Նա պետք

ե այդ կովերի համար շինի անասնոց: Նա պետք ե պատրաստե բոլոր հանրայնացրած անասունների համար հարկավոր չափով կեր:

Անպայման հանրայնացվում են արտադրող անասունները, — ցուլերը, «զավողի» ձիերը, ազնվացեղ վոչխարները և այլն: Ինչ վերաբերում ե մանր անասունին, այդ մասին կանոնադրության մեջ ասված ե. «մանր անասունների, այսինքն խոզերի և վոչխարների հանրայնացումը կատարվում ե այն ռայոններում, վորտեղ զարգացած ե մանր անասունների արդյունաբերող անասնաբուծությունը, ըստ վորում արտելի անդամներին թողնվում ե վորոշ քանակությանը մանր անասուն՝ համաձայն արտելի վորոշման: Վորտեղ մանր անասունների արդյունաբերող անասնաբուծություն չկա, այդտեղ խոզերը և վոչխարները չեն հանրայնացվում»:

Մենք արդեն ասել ենք, վոր մի շարք տեղերում պահում են մի ֆեանի հարյուրներով վոչխար, — այդ ռայոններում հարկավոր ե դրանց հանրայնացնել: Իսկ յեթե մանր անասուն պահում են քիչ թվով, — մեկ գոմի, յերեք-չորս վոչխար, — դրանց հանրայնացնելու կարիք չկա:

Բայց այդ չի նշանակում, վոր արտելը չի կարող պարապել վոչխարաբուծությամբ կամ խոզաբուծությամբ: Վհչ, նա կարող ե պարապել և պետք ե պարապի, բայց նա առնում ե խոզերը և վոչխարները իր անդամներից կամ դրսում: Արտելը կարող ե պարապել նույնպես և թռչնաբուծությամբ, վորովհետև

Թռչունը մեծ ոգնություն է տնտեսության մեջ։
Բայց ըստ կանոնադրության, տնային թռչունները
ամենեւին չեն հանրայնացվում։

ԿՈԼԻՈՋԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԾԱԽԵԼ ԻՐԵՆՑ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՎԵԼՑՈՒԿՆԵՐԸ

Յերբ կոլխոզի անդամները պահում են իրենց համար
չհանրայնացրած կովեր, խոզեր, վոչխարներ, հավեր,
սագեր և այլն, — պարզ է, վոր տնտեսության մեջ
կլինեն ավելցուկներ։ Սոզը ունենալու յե գոճիներ,
հավը ձու յե ածելու ավելի, քան հարկավոր է տի-
րոջը, — ինչ պետք է անել այս բոլորը։ Իհարկե, կա-
րելի յե ծախել կոոպերացիային կամ քաղաքի շուկա-
յում քաղաքացիներին։

Թվում է թե ամեն ինչ պարզ է, սակայն մի քանի
տեղերում մի ժամանակ կոլխոզիկներին արգելում
էին շուկա հանել վաճառելու ձուն և յուղը։ Ողե-
սայում քաղաքային միլիցիայի պետը կարգադրել էր
զրավել այն բոլոր պարենները, վոր գյուղացիները
բերում էին շուկան ծախելու։ Այդ քալազոզու-
թյունը թողել էր բանվորներին և ծայայողներին
առանց մսի և կաթի։ Գյուղացիներից խլում էին
ամեն ինչ, իսկ գյուղխորհուրդներին ուղարկում էին
թուղթ՝ դատի յենթարկելու «մեղավորներին»։

Այստեղ դարձյալ մեր առջևն է կուսակցության
գծի ծռումը։ Կուսակցությունը և կառավարու-
թյունը վոչ մի ժամանակ չեն արգելել գյուղացինե-
րին ծախելու իրենց ավելցուկները, վոչ մի ժամա-
նակ կարգադրություն չեն արել փակելու շու-
կաները։ Այդ արել են տեղերում չափազանց յեռան-

դուն «պետերը»: Այդ սխալներն այժմ ուղղված են: Կուսակցութեան կենտկոմի մարտի 15-ի դիմումի մեջ ասված է. «Արգելել շուկաների փակումը, վերաբացել բազարները և չխանգարել գյուղացիներին, վորոնց թվում նաև կոլխոզներին՝ վաճառելու իրենց պարենները շուկայում»:

ԿՈԼԽՈԶԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԱՎԱՆԵԼ ԻՆՁ

ԿՐՈՆ ՈՒՋՈՒՄ ԵՆ

Վորպեսզի խրտենցենն գյուղացիներին կոլխոզներից, կուլակները փափառում եյին.

— Կոլխոզներում ստիպում են ուրանալ աստծուն: Կոլխոզներում չի կարելի վոչ խոստովանել, վոչ հաղորդվել և վոչ ել յերեխաներին մկրտել: Մեռնողներին ել թաղում են առանց յեկեղեցական ծեսի:

Շատերը, մանավանդ ծերերն ու պառավները, հավատում եյին և վոչ մի կերպ հնար չկար նրանց կոլխոզ քաշելու: Կուլակների ոգտին եյին աշխատում նաև քյալլագյոզները: Աշխատելով, ինչպես ընկ. Ստալինն է ասում, «իրենց խելքից վեր», նրանք կոլխոզային շինարարությունը սկսում եյին յեկեղեցիները փակելով և զանգակները հանելով: Դրանով գյուղացիները, իհարկե, անաստված չդարձան, իսկ կուլակները առիթ ունեցան չարախնդությամբ ասելու.

— Մենք չեյինք ասում, այ, տեսնում եք: Յեկեղեցին կողպել են, ուրեմն քրիստոնյայի նման մեռնել ել չի կարելի:

Վոչ կուսակցությունը և վոչ ել կառավարությունը չեն նեղել և չեն ել նեղում հավատացողներին: Կուսակցությունը կռվում է կրոնի դեմ ու անդադար

բացատրում եւ, վոր կրօնը միշտ յեղել եւ այն ցանցը, վորի մեջ ձգել են ժողովրդին տերտերները, վորպէսզի ստիպեն նրան ծառայելու թագավորին, կալվածատիրոջ եւ գործարանատիրոջ։ Կրօնական թուլնի դեմ կուսակցությունը շարունակելու յե իր կռիվը, բայց այդ կռիվը մղվել եւ և մղվում ե համոզմունքի ու ժողով եւ վոչ թե ստիպողական ու ժողով։

Փակել յեկեղեցին այն ժամանակ, յերբ դեռ գյուղացիների մեծամասնությունը հավատացողներ են, — նշանակում ե ոգնել տերտերներին և կուլակներին։ Դրա համար ել կուսակցության կենտկոմը առաջարկել ե. «վճռականապէս վերջ տալ յեկեղեցիները վարչական յեղանակով փակելուն։ Յեկեղեցիները կարող են փակվել միայն ժողովրդի հոժար կամքով։ Թույլ տալ փակել յեկեղեցիները միայն այն դեպքում, յերբ գյուղացիների ճնշող մեծամասնությունը խկապէս ցանկանում ե այդ և այն ել՝ յերբ ժողովի վճիռը հաստատում ե շրջանային գործկոմը։ Գյուղացիների և գեղջկուհիների կրօնական զգացմունքները ծաղրելու դեպքում մեղավորներին խիստ պատասխանատվության յենթարկել։

ԱՌԱՆՑ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՖՈՆԴԻ ԱՐՏԵԼ ԶԻ

ԿԱՐԵԼԻ ՍՏԵՂԾԵԼ

Չնայած կուլակների և նրանց պոչերի ու քյալադայոյների ջանքերին, կոլխոզները ամբանում ու զարգանում են։ Այն կոլխոզները, վոր գոյություն ունեյին միայն թղթի վրա, անհայտացան, բայց ստեղծվեցին նորերը։ Միլիոնավոր գյուղացիական տնտեսություններ մտան կոլխոզները՝ մեծ մասամբ գյուղատնտեսական արտելները։ Այժմ գլխավոր խոն-

դիրը նրանումն է, վոր ամրացնենք այդ արտելները, զարգացնենք և բարելավենք:

Գյուղատնտեսական արտելի նոր կանոնադրությունը խոսում է վոչ միայն այն մասին, թե ինչպես պետք է հիմնել արտելը, այլ և այն մասին, թե ինչպես պետք է աշխատել, վոր արտելը չքայքայվի մի ամսից կամ մի տարուց հետո, այլ՝ ծավալվի ու զարգանա: Վորպեսզի արտելը զարգանա և ուճանա, հարկավոր է, վոր գործը հաստատուն հիմքի վրա դրված լինի և, ամենից առաջ հարկավոր է, վոր նա մեկ մարդու կամքից կախված չլինի:

Բոլորը մտել են արտել հոժար կամքով. բոլորը պետք է մի ընդհանուր գործ կատարեն: Բայց այնտեղ, վորտեղ միևնույն գործը կատարում են մի քանի տասնյակ և հարյուրավոր մարդիկ,—վոչ մի ժամանակ չի կարող կատարյալ համաձայնություն լինել: Մեկը մի կողմ է քաշում, մյուսը՝ մի այլ կողմ: Մեկել տեսար, տարին անցավ: Ավագյանցը կամ Պետրոսյանցը և կամ Սարգսյանցը հեռանում են արտելից: Ի՞նչ պետք է անել այդ դեպքում: Ավագյանցը տվել է արտելին իր կալսող մեքենան,—պետք է վերադարձնել նրան, թե վոչ: Պետրոսյանցը տվել է արտելին իր արտադրող յեզը, նշանակում է, վոր արտելից հեռանալով նա արտելի նախիրը թողնում է առանց յեզի: Ի՞նչ պետք է անել դուրս յեկողների հողի հետ: Միթե պետք է արտելի դաշտից կտրել դուրս յեկողների բաժինը: Իսկ Ավագյանցի հողի վրա արտելը, որինակ, այգի յե տնկել արդեն:

Արտելը կզարգանա և կամրանա միայն այն դեպքում, յերբ վոչ Ավագյանցը, վոչ Պետրոսյանցը և վոչ

եւ Սարգսյանցը հնարավորությունն չեն ունենա քայ-
քայելու արտ' լի տնտեսություննր: Արտելը կամրանա,
յեթե նրա տռանձին անդամների հեռանալուց հետո
արտելի տնտեսությունը կմնա նույնպես ամուր, ինչ-
պես մինչև նրա անդամների հեռանալն եր: Արտելը
կամրանա միայն այն դեպքում, յեթե նա կունենա
անբաժանելի ֆոնդ, վորը չպիտի վերադարձվի արտե-
լից հեռացող անդամներին:

ԿՈԼԽՈՋՆԻԿՆԵՐԻ ԿԱՅՔԻ ՎՈՐ ՄԱՍՆ Ե ԱՆՑՆՈՒՄ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՖՈՆԴԻՆ

Կանոնադրության համաձայն, կոլխոզնիկների կայքի
վո՞ր ժաման է անցնում անբաժանելի ֆոնդին: Կանո-
նադրության մեջ ասված է. «հանրայնացրած
կայքի, բանող և արդյունավոր անասուն-
ների, ինվենտարի, տնտեսական շինու-
թյունների և այլն արժեքի մի քառորդից
մինչև կեսը»:

Ձի կարելի միատեսակ վերցնել և չքավորից, և՛
ուռնորից: Դրա համար եւ կանոնադրությունն ասում
է. վոչ թե քառորդ կամ կես, այլ մի քառորդից
մինչև կեսը: Հողժողկոմի և կոլխոզկենտրոնի բացա-
տրությունների համաձայն, արտել մտնելու սկզբնա-
կան վճարը սահմանված է 5-ից մինչև 25 ռուբլի՝
նայած տնտեսության նյութական ուժին: Բատրակների
համար, վորոնք սովորաբար վոչ մի կայք չունեն,
կանոնադրությունը նշանակում է վոչ ավելի 5 ռուբ-
լուց: Տնտեսության կարողությունը վորոշվում
է քանցյալ տարվա գյուղատնտեսական հարկի քա-
նակից:

Բացի հանրայնացրած կայքի արժեքից բղխող մասից, անբաժանելի ֆոնդին են անցնում սկզբնավճարները, վոր տալիս են արտելին անդամները։ Անբաժանելի ֆոնդին տրվող բաժնի չափը վորոշվում է անցյալ տարի վճարած գյուղատնտեսական հարկի քանակից։ Ձքավոր տնտեսությունները, վոր ազատված են գյուղատնտեսական հարկից, մտցնում են անբաժանելի ֆոնդ իրենց հանրայնացրած կայքի միայն մի քառորդ (25 տոկոս) մասը։

Անբաժանելի ֆոնդի մեջ են մտնում նաև բոլոր փոխառությունները, վոր ստանում է արտելը, ապակուլակացման յենթարկվածների կայքը, պետական ունեցվածքը, վոր տրվում է արտելին շահագործելու համար և այլն։

Անբաժանելի ֆոնդը արտելի հիմքն է։ Վորչափ մեծ է անբաժանելի ֆոնդը, այնքան ամուր է արտելը, այնքան քիչ է նրա կախումը արտելի առանձին անդամներից։ Թող արտելից հեռանա վոչ թե մի մարդ, այլ մի ամբողջ տասնյակ։ Դրանից արտելի տնտեսությունը չի խախտվի, յեթե նրա անբաժանելի ֆոնդը մեծ է։

— Լավ, բայց հողի հմրցը ինչպես է վճռվում։ Կոլխոզնիկների մի մասը հեռանում է և յետ է վերցնում իր հողամասերը։ Արտելի տնտեսությունը այսպիսով կարող է խախտվել։

Կանոնադրությունը այս հարցն էլ նախատեսել է։ Եթե թե ինչպես է նա վճռում հողի հարցը, ճարտելի անդամների հողամասերի բոլոր սահմանները վոչնչացվում են և բոլոր դաշտային հողամասերը դառնում են մի ամ-

բողջ հողային տարածութիւնը (մասսիվ), վոր գտնվում է արտելի կոլեկտիվ ոգտագործման մեջ, Ամբողջ հողային տարածութիւնը վոչ մի դեպքում չպիտի պակսի: Արտելից հեռացող անդամներին նոր հողաբաժին տալը արգելվում է կատարել արտելի հողային հրապարակի հաշվին:

Արտելի ամբողջ հողը դառնում է մի մեծ դաշտ (մասսիվ) և նրա վրա արտելը վարում է մի խոշոր տնտեսութիւն: Արտելը բաժանում է ամբողջ հրապարակը դարձանացանի, աշնանացանի, արմատապտուղների համար, տեղ է հատկացնում արտելի այգուն և բանջարանոցին: Յեթե արտելի անդամների սեփականութիւն թողնել նրանց հողերը, այն ժամանակ արտելից վոչ մի ոգուտ չի լինի և ուրեմն իսկի կարիք ել չկա գործը սկսելու: Միմիայն դարձնելով բոլոր հողամասերը մի ամբողջ մասսիվ, կարելի յե դա հերկել տրակտորով, կանոնավոր ցանքս մտցնել, գլուխ բերել կանոնավոր տնտեսութիւն:

Յեվ, բացի դրանից, սահմանների վոչնչացնելը ահագին ոգուտ է տալիս ընդհանուր տնտեսութեանը: Նայում ես — մի փոքրիկ չնչին բան է սահմանադիժը, բայց յեթե հաշվենք, թե ինչ տարածութիւն են բռնում բոլոր սահմանները Միութեան մեջ, կտեսնենք, վոր իզուր տեղը կորչում է տասը միլիոն հեկտար լավ հող՝ վորպես սահմանադիժ: Հիմա նայեցեք այդ սահմաններին. նրանց վրա բռնում են անպետք խոտեր, հացաբույսերը սահմանին մոտ ավելի նոսր ու փոքրահասակ են ծլում, քան արտի մեջտեղում: Հարթ դաշտի վրա հացաբույսերը բուս-

նում են համաչափ, անպետք խոտերի համար տեղ չի
մնում և ավելի հեշտ ե վոչնչացնել այդ խոտերը:

Գյուղացիները հիմնել են արտել: Արտելը ամբողջ
հողի հրապարակը բաժանել ե դաշտերի, մտցրել ե
բազմադաշտ սիստեմ, սերմնաշրջանառություն, ցանել
ե արմատապտուղներ: Յեվ հանկարծ արտելի անդամ-
ներից մեկը դուրս ե գալիս: Խնչ պետք ե անել այդ
դեպքում: Կտրել նրա բաժին հողը, նորից ձևել տնտե-
սության ամբողջ պլանը, կանչել յերկրաչափին և
գյուղատնտեսին: Հարկավոր կլինի տարվա մեջ մի
յ՛րկու անգամ նորից ձևել ամբողջ տնտեսությունը
և աշխատելու ժամանակ ել չի մնա:

Դրա համար ել կանոնադրությունը վճռականապես
արգելում ե հեռացող անդամին հող տալ ար-
տելի հողային մասսիվից: Հասկանալի յե, վոր
հեռացողներին չի կարելի թողնել առանց հողի, բայց
նրանք ստանում են վոչ թե այն հողը, վոր մտցրել
են արտել, այլ՝ ուրիշ հողաբաժին պետական հողային
ֆոնդից: Սակայն միանգամայն անթույլատրելի յե
տալ «հեռացողներին» անհարմար հողաբաժին, յեթե
կոլխոզի սահմանից դուրս և նրան մոտիկ կա հար-
մար հողաբաժին:

Նույնպես անթույլատրելի յե պակսեցնել «հեռա-
ցողներին» տրվող հողի քանակությունը:

— Այդ ի՞նչպես կարելի յե, — կասեն վոմանք, —
ինձ գոռով մտցրել են կոլխոզ, իսկ այժմ յես պիտի
մնամ և առանց հողի և կարողությանս կեսն ել պիտի
մնա կոլխոզում:

Յեվ նա արդարացի յե: Խնչու նա պիտի վնասվի
այն հիմարությունից, վոր կատարել են այս կամ այն

քայլադրոյնները: Արտելից դուրս են գալիս այն դեպքում,
յերբ տեղի յե ունեցել ստիպումն, յերբ կոլխոզը գո-
յություն ե ունեցել լոկ թղթի վրա և վոչ եյապես,
կոլխոզնիկը յետ ե ստանում իր ամբողջ հանրայնա-
ցրած կայքը, իր բոլոր հողամասը: Բայց այնտեղ,
վորտեղ կոլխոզը հիմնվել ե կանոնավոր կերպով, վոր-
տեղ գյուղացիները մտել են իրենց հոժար կամքով,—
արտելի կանոնադրությունը հողի և անբաժանելի ֆոնդի
վերաբերմամբ խստությամբ պիտի կիրառվի: Այլ կերպ
չի կարելի արտելի տնտեսություն ստեղծել:

Ել ինչ կարիք կա արգելել մարդկանց հեռանալու
Ռւմն ե պատժում կոլխոզից հեռացողը: Ամենից առաջ
ինքն իրեն: Այս տարվա ապրիլ ամսի 3-ի թերթում
տպված ե կուսակցության Կենտկոմի վորոշումը կոլ-
խոզնիկների արտոնությունների մասին:

Համաձայն այդ վորոշման, յերկու տարով
ադատվում են ամենատեսակ հարկերից վոչ
միայն հանրայնացրած անասունը, այլ և
բոլոր չհանրայնացրած անասուններն ու
թռչունները, վորոնք գտնվում են թե կոլ-
խոզի մեջ և թե նրա անդամների անհատա-
կան տրամադրության տակ:

Պետույթունը բաց ե թողնում փոխարի-
նաբար կոլխոզների պետքերի համար հինգ
հարյուր միլիոն ռուբլի: Անհատականի բո-
լոր հողային պարտքերը, վոր նա տրել ե
մինչև կոլխոզ մտնելը, վերացվում են: Վե-
րացվում և վոչնչացվում են բոլոր տու-
գանքները և դատական այն պահանջները, վո-
րոնք կապ ունեն գյուղատնտեսական պար-

տազանց ությունները հետևելով խոզները մտած գյուղացիներին կողմից տեղի յե՛ն ունեցել մինչև 1930 թվի ապրիլի 1-ը, կոլ-խոզային բանջարանոցներ կամ բանջարա-նոցային կոլխոզներ հիմնելիս 50 տոկոս զիջումն է արվում արդյունքի վրա հարկ դնելիս: Հանրայնացրած նոր բանջարա-նոցների և բանջարանոցային կոլխոզների հողամասերը յերկու տարով բոլորովին ազատվում են գյուղատնտեսական հարկից: Տրակտորների համար տրվող ավանսի գան-ձումը այս տարի դադարում է: Ամենատեսակ ստիպողական դրամ ժողովելը, վորպես փայ՝ վարկային ընկերությունները կամ կոո-պերացիան մտցնելու համար, այլ և խնայո-ղական գանձաբանը ստիպմամբ փող մըտ-ցնելը արգելվում է: Կուլակային գրաված կայքի պարտքը, վոր անցնում է կոլխոզին վորպես սեփականություն, բոլորովին վե-րացվում է: Բացի դրանից, ապրիլի 23-ի որենքի համաձայն, կոլխոզիկները ազատ-վում են 1930/31 տարում որենքով սահ-մանված ինքնահարկից:

Այս բոլոր արտոնությունները տրվում են կոլխոզ մտնող գյուղացիներին, վորպեսզի ոգնեն նրանց անց-նելու անհատական տնտեսությունից հանրայնացված տնտեսության, վորպեսզի կատարվի ու կյանք տա՛նա կուսակցության հիմնական գիծը. — գրավել դեպի կոլ-խոզները վոչ թե ստիպմամբ այլ համոզելով ու ոգնե-լով: Այդ արվում է նրա համար, վոր եյապես կա-

տարւի են վլադիմիր Իլլիչ Լենինի խոսքերը. «Որ-
սուտ եւ լսված ամենատեսակ ընկերություն-
ները, ինչպէս նաեւ միջակ գյուղացիներ
գյուղատնտեսական կոմունաները, խորհր-
դային իշխանության ներկայացուցիչները
ամենափոքրիկ ճշգրտման անգամ չպիտի
թույլ տան այդ ձեռնարկները ստեղծելիս»:

ԱԳԱՐԱԿՆԵՐԻՆ ԿԻՑ ՀՈՂԵՐԸ

Ագարակներին կից հողերը գյուղատնտեսական
արտելի կանոնադրության համաձայն չեն անցնում
ընդհանուրի տրամադրության, այլ մնում են արտելի
անդամների անհատական տրամադրության տակ: Հան-
րայնացնել յերեք մարդ կադամբ կամ սի տասնյակ
խնձորենի նույնչափ անմիտ բան է, վորչափ հա-
վերի և սագերի հանրայնացումը: Ագարակներին կից
հողի հերկելը մտնում է արտելի աշխատանքների
պլանի մեջ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՐՏԵԼԻ ՀԻՄՔՆ Ե

Արտել մտնում են վոչ թե նրա համար, վոր
պարտաւսարապ թրե դան: Արտել են դնում, վոր
ավելի լավ ու կանոնավոր աշխատեն: Արտելում պետք
է լավ կազմակերպված (կարգի դրած) լինի աշխա-
տանքը: Յեթե ամեն մեկը գուրս գա աշխատանքի
այն ժամանակ, յերբ իր քեֆն է ուղում, կամ անի
այն, ինչ վոր այն բոսլային նրա սրտովն է, այդ
դեպքում տնտեսությունը կքայքայվի: Նույնիսկ ան-
հատականի տնտեսության մեջ աշխատանքը կանո-
նավորված է: Կինը ճաշ է պատրաստում, փոքրերը

արածացնում են սագերին, ընտանիքի ամեն մի անդամ իր գործն է կատարում: Մանավանդ անհրաժեշտ է, վոր արտելում, վորը հարյուրավոր անդամներ ունի, առաջուց ամեն մեկի գործը նշանակված լինի: Կոլխոզնիկների մի մասը աշխատում է դաշտում, — հերկում է, ցանում է, հնձում է: Մյուսները զբաղված են անասնոցում, ուրիշները աշխատում են հասարակական բանջարանոցում:

Արտելը պիտի հետևի, վոր իր անդամները աշխատեն վորքան կարելի յե լավ և նրանցից յուրաքանչյուրը իր ուրը լրիվ աշխատե: Խնչպես հայտնի յե, գյուղական տնտեսության մեջ ամառը աշխատանք խիստ շատ է՝ հնձի և դաշտային աշխատանքների ժամանակ, իսկ ձմեռը համարյա ամբողջ որերով գործ չի լինում: Արտելը պիտի հոգա այն մասին, վոր զբաղեցնի ավելորդ մարդկանց, վորպեսզի ձմեռը աշխատանք տա իր անդամներին: Նա պետք է մտցնի տնայնագործություն այնտեղ, վորտեղ մինչև այժմ չի յեղել, նա պետք է բաց թողնի իր անդամների մի մասը դրսում աշխատելու:

Դրա փոխարեն մեր «խելոքներից» վոմանք արտելներում և կոլխոզներում արգելում են իրենց անդամներին դրսում աշխատելու: Մեծ շինարարություն է կատարվում այս բոլորիս, շատ բանվոր ձեռքեր են հարկավոր, այնինչ բանվորները նստած են գյուղում և վոչինչ չեն անում: Արտելը պետք է իր մոտ պահի այնքան բանվոր ձեռքեր, վորքան իրեն իսկապես հարկավոր է, իսկ մյուսներին պիտի բաց թողնի դրսում աշխատելու: Միության Ժողկոմխորհը 1930 թ. մարտի 16-ին վճռել է.

«Վճռականապես արգելել տեղական իշխանություններին և կոլխոզային կազմակերպություններին, վոր նրանք չխանգարեն գյուղացիներին, դրանց թվում և կոլխոզնիկներին, կողմնակի և սեզոնային աշխատանքներ կատարելու (շինարարական աշխատանքներ, անտառանյութեր պատրաստել, ձկնորսության աշխատանքներ)»:

Նրանք, վորոնք կխանգարեն այդ վորոշման գործադրությունը, կկանչվեն քրեյական պատասխանատվության:

Արտելը պիտի ամեն ջանք գործ դնի, վոր բոլոր բանվոր ձեռքերը զբաղված լինեն: Արտելի կանոնադրությունը բավականաչափ պարզորեն ասում է, վոր դրսում աշխատող կոլխոզնիկների աշխատանքից կարելի չեր վերցնել յերեքից մինչև տասը տոկոս: Ավել վերցնել՝ նշանակում է չհասկանալ արտելի կանոնադրությունը, չհասկանալ, թե ինչպես պետք է կարգավորել աշխատանքը արտելի մեջ:

Կուսակցության կենտկոմը ապրիլի 2-ի իր վորոշման մեջ առաջարկում է—«արգելել բաժին հանել կոլխոզից դուրս աշխատող կոլխոզնիկներին աշխատանքից ավելի տոկոս, քան այդ սահմանված է որենքով՝ դրսում կատարվող աշխատանքների վերաբերմամբ (վաստակի յերեքից մինչև տասը տոկոսը)՝ անկախ ժամանակից և աշխատելու վայրից»:

Միննույն վորոշման մեջ ասված է. «պարտավորեցնել կոլխոզների վարչությունները

արգելքներ չստեղծել այն կոլխոզնիկներին, վորոնք աշխատանքից ազատ ժամանակը ուզում են աշխատել կոլխոզի հանրայնացրած ձիյերով՝ բեռնակրությամբ, անտառանյութեր պատրաստելով և այլ գործերով պարապելիս, ըստ վորսւմ այդ դեպքերում սահմանել, վոր կոլխոզների աշխատանքի քառասուն տոկոսը մնա իրեն, յեթե նա կերակրում է անասունը կոլխոզի հաշվին, իսկ յեթե կերակրում է իր հաշվով, այդ դեպքում նրան մնում է վաթսուն տոկոսը:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԱՐՏԵԼՆԵՐՈՒՄ

Անհատական տնտեսության մեջ գյուղացին վարում ու ցանում է իր համար: Շատ հաճախ նա նույնիսկ վաճառքի յել չի հաճում իր արտադրությունը: Արտելում հերկելը ընդհանուր է, ցանքսը ընդհանուր է, բերքահավաքը ընդհանուր է: Այնտեղ յեթե բաժնի վրա հույս դնես, շատ հեռուն չես գնա: Պետք է այնպիսի մի կարգ դնել, վոր կոլխոզի ամեն մի աշխատավոր արդար վարձ ստանա:

Դրա համար ել գյուղատնտեսական արտելի նոր կանոնադրությունը մտցնում է բոլոր արտելի համար միատեսակ վարձադրության կարգ, պայմանական և նշանակած ժամանակի համաձայն (սղելնի և ուրոչնի):

Մեկը լավ է աշխատում, մյուսը վատ: Մեկը որվա մեջ հնձում է ավելի, մյուսը պակաս, բայց յեթե առնենք, որինակ, յերկու հարյուր հնձվորներ, այդ

դեպքում կարելի չե վորոշել, թե որեկան ինչքան կարող ե հնձել միջակ աշխատավորը: Դա այն ե, ինչ կոչվում ե աշխատանքի նորմա (չափ): Յյուրքանչյուր աշխատավոր ստանում ե վորոշ վարձ այդ նորմայի իրագործման համար ե վորոշ վարձ ել նրա համար, յերբ ավելի չե աշխատում նորմայից: Աշխատավարձի վճարելու ժամանակ հաշվի չե առնվում վոչ միայն աշխատանքի քանակը, այլ ե վորակը: Կարելի չե աշխատել շատ արագ ե — շատ վատ: Այդ տեսակ արագությունը վոչ վոքի հարկավոր չե: Բացի այդ, չի կարելի հավասար արժեք տալ սեպորժ բանվորի, տրակտորիստի ե փահանագործի աշխատանքին: Արտելը ամենից առաջ սահմանում ե աշխատանքի նորմա, այսինքն այն, թե ինչ կարող ե անել միջակ աշխատավորը ե ապա սահմանում ե աշխատանքի տեսակների արժեքը: Այն բոլոր աշխատանքը, վոր կատարել ե կոլխոզնիկը, զրվում ե նրա հաշվեգրքույկի մեջ ե այդ գրքույկի համաձայն ել նա ստանում ե իր աշխատավարձը:

Վերցնենք որինակ, ցանողի որեկան 10 ժամյա աշխատանքը գնահատվում ե մի ուռլի: Նա պետք ե ցանի մի որվա մեջ (աշխատանքի նորմա) չորս հերկար 11 շարքանոց ցանիչով: Հետևաբար ամեն մի ցանած հեկտարի համար նա ստանում ե 25 կոպեկ: Նա ցանել ե որվա մեջ միայն յերեք հեկտար ե ստանում ե 75 կոպեկ, իսկ յեթե ցանի որվա մեջ 6 հեկտար, կստանա 1 ու. 50 կ.

Աշխատավարձի այդ ձևի դեպքում վոչ վոք չի կարող գանգատվել, վոր նա աշխատում ե իր հարևանից ավելի, բայց ստանում ե միևնույն գումարը: Ով

ավելի յե աշխատում նա ավելի յե ստանում և ովքիչ ե աշխատում, նա քիչ ել ստանում ե: Գանգատ չի կարող լինել և այն մասին, վոր մեկի աշատանքը ավելի դժվարին ե, պահանջում ե ավելի փորձառություն, քան մի ուրիշի աշխատանքը: Փականագործը ստանում ե մի վարձ, դարբինը՝ մի ուրիշ վարձ և հողափորը՝ մի այլ վարձ:

Սակայն յեթե կոլխոզնիկների ընդհանուր ժողովն ուզենա, կարող ե աշխատանքի վարձը տալ վոչ թե առանձին կոլխոզնիկի աշխատության քանակի և վորակի համաձայն, այլ՝ համաձայն ամբողջ ընտանիքի աշխատանքի:

Զպետք ե մոռանալ, վոր աշխատավարձը կոլխոզներում մշակության վաստակ չե: Կոլխոզը — կոլեկտիվ տնտեսություն ե: Նրա անդամները մասնակցում են նրա մեջ իրենց աշխատանքով և կայքով և դրա համար ստանում են արդյունքի վորոշ մասը:

Այս պատճառով ել կոլխոզներում աշխատավարձը տրվում ե բացառապես կոլխոզի բերքից և այլ արդյունքներից:

Անպայման չի կարելի միայն փողով վճարել: Պետք ե վճարել նատուրայով, այսինքն պարենով և փողով: Բացի այդ աշխատավարձից, ամեն մի կոլխոզնիկ, համաձայն իր մտքրած կայքին, ստանում ե իր բաժինը ընդհանուր բերքի 5 տոկոսից և հայնրայնացրած կաթնատու անասունների տված արդյունքից:

Կոլխոզային աշխատավարձը գործարանային վարձ չե: Շատ կհավաքես բերք, կարելի յե շատ ստանալ, իսկ յեթե բերքը լավ չի լինի — ստիպված պետք ե բավականաչափ յեղածով:

Իդուր չի ասում առածը — Շինչ կցանես, այն ել
չհնձես: Դա շատ ճիշտ է:

Դյուղական տնտեսության մեջ պատահականու-
թյուններից չես կարող ապահովված լինել: Կարող ե
կարկուտ դալ, ձիերը կարող են սատկել, յերաշտ
կարող ե պատահել: Արտելը չի իմանում, կարող ե
արդյոք բանվորին տալ նշանակած վարձը: Նա կարող ե
իմանալ այդ միայն տարվա վերջում: Դրա համար ել
արտելի կանոնադրությունը ասում ե, վոր աշխա-
տավար ձի վե ընակաւն հաշիվը տեսնվում ե
տնտեսական տարվա վերջում, իսկ տարվա
ընթացքում արտելի անդամներին տրվում
ե ավանս վոչ պակաս վորոշված վճարի
կիսից:

Բայց հո արտելի բոլոր անդամները չեն կարող
աշխատել: Կան հիվանդներ, վորոնք չեն կարող աշխա-
տանքի դուրս դալ: Յեթե նրանք վոչինչ չստանան,
ինչո՞վ պիտի ապրեն:

Կանոնադրությունը այդ մասին ասում ե, վոր
արտելը պարտավոր ե ոգնել իր հիվանդ և հաշմանդամ
անդամներին իր ունեցածի համաձայն՝ նկատի առնե-
լով հաշմանդամի աշխատանքի միջին գումարը:

Բացի պայմանական վարձից, վոր մտցնում ե կանո-
նադրությունը, յեղել են վճարելու նաև այլ ձևեր.
վ արել են ուտող բերանների քանակի համաձայն, —
բոլորին միահավասար, վճարել են ըստ ընտանիք-
ների և արտելի ամեն մի անդամի պետքերի համա-
ձայն: Բայց այս բոլոր ձևերը ունեցել են մի պակա-
սություն. հաշվի չեն առնվել կատարված աշխատանքի
վոչ քանակը և վոչ ել վորակը:

Բայց շատ կոլխոզներում լինում ե և այսպես. գործը քիչ ե, իսկ աշխատող ձեռքերը շատ, բայց ուտել- խմել հարկավոր ե: Դրա համար ել աշխատանքը բա- ժանելիս հաշվի ալիտի առնել ուսող բերանների քա- նակը: Վոր ընտանիքում շատ ուսողներ կան, նրան ավելի յե տրվում աշխատանք: Բայց այս ձևի դեպ- քում ել աշխատանքը առաջվա նման վարձատրվում ե ըստ քանակի և վորակի:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՍԶԻՊԼԻՆԻ ՄԱՍԻՆ

Ինչ տեսակ աշխատավարձ ուղում ես մտցրու, ինչ- պես ուղում ես բաժանիր պարտականությունները, վոչինչ չի դուրս գա, յեթե արտելի անդամները չկա- տարեն արտելի մշակած կանոնները: Կուղարկեն վորևե- մեկին աշխատելու, իսկ նա կասե.

— Ձեմ ուղում, թող Մարկոսը գնա:

Մարկոսն ել ցույց կտա Վարդանի վրա, իսկ Վար- դանը ժամանակ չունի:

Հարկավոր ե, վոր արտելում բոլոր կոլխոզնիկները յենթարկվեն աշխատանքի կանոններին, ուրիշ խոսքով՝ հարկավոր ե, վոր արտելներում պահվի աշխա- տանքի դիսցիպլին:

Աշխատանքի պայմանական (սղեւնի) վարձը բա- վականաչափ ապահովում ե արտելը վորոշ աշխատա- վորների անբարեխղճությունից և ծուլությունից: Բայց և այնպես աշխատանքից փախչելու առանձին դեպքեր կլինեն: Կարող են լինել նաև դեպքեր, վոր կոլխոզնիկը կձգե դաշտի մեջ, անձրևի տակ դութանը, անձրևի տակ կթողնե թանկագին մեքենան: Ինչպես առաջն առնել այդ տեսակ դեպքերի:

կանոնադրությունն ստում եւ «Հանրայնացրած ինվէնտարին և անասունն երին անփուլթ ու վոշ-անտեսաբար վերաբերվելը պետք ե համարել դավաճանություն կոլեկտի-վացման գործին և գործնական ոգնություն թշնամուն-կուլակին»:

Կայքին վոշ տնտեսաբար և անփուլթ վերաբեր-վելու և աշխատանքից փախչելու համար արտելը կա-րող ե պատժել մեղավորներին: Նա կարող ե հանդի-մանություն անել արտելի անդամին, իջեցնել աշխա-տավարձը, տուգանքի յենթարկել, աշխատավարձից դուրս գալ փչացրած իրի արժեքը:

Անուղղելիներին արտելը կարող ե դուրս անել կոլ-խոդից:

— Լիւի, — կասեն արտելի հակառակորդները, — համաձայն ենք. կաշխատեն ձեզ մոտ, տուգանքից կվախենան և կայքը չեն փչացնի, բայց և այնպես լավ աշխատություն չի կարող լինել ձեզ մոտ: Բոլորն ել գործին նայելու յեն, վորպես խորթ գործի: Վեր-ջացրեց գործը՝ վաղելու, յե տուն:

Յեւ խկապես, բարեխղճորեն աշխատաւելը քիչ ե, բացի դրանից արտելի ամեն մի անդամ պարտավոր ե աշխատել կրճատելու կոլխոդի ծախսերը, հնարներ գտնել բարելավելու տնտեսությունը, բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը:

Հասկանալի յե, վոր արտելի ամեն մի անդամ պետք ե հասկանա, վոր ընդհանուր ոգուտը միաժա-մանակ և իր ոգուտն ե, բայց և այնպես վորոշ ան-դամների առանձին ծառայությունը պետք ե առանձ-նապես վարձատրել: Դրա համար արտելը ունի

առանձին պարզևատրական ֆոնդ, վորից պարզևներ (պրեմիա) և տալիս առանձնապես աչքի ընկնող աշխատանքների համար, բանող անասունին հոգատար վերաբերվելու համար, տնտեսության մեջ բարելավումներ մտցնելու և նյութերին խնայողաբար վերաբերվելու համար:

ԿՈՒԽՈՋԸ — ՍՏՐԿՈՒԹՅԱՆ ՏԵՂ ԶԵ

Անհատական տնտեսություն վարող գյուղացին վեր և կենում ու պառկում՝ յերբ ցանկանում և, վոչ վոք նրան չի ստիպում աշխատանքի դուրս գալ՝ յեթե նա չի ցանկանում: Իսկ արտելում յուրաքանչյուրը պարտավոր և հպատակվել արտելի ներքին կանոնադրությանը: Արտելում, ինչպես և գործարանում, բոլորը գործի յեն դուրս գալիս միաժամանակ և միաժամանակ ել հեռանում գործից: Սա առիթ և տվել կուլակներին ասելու.

— Կոլխոզը ստրկություն և Աշխատելու յեք այնտեղ կոմիսարների համար:

Դա ուղղակի ծիծաղելի յե: Բանվորը այժմ գործարանում աշխատում և վոչ գործարանատիրոջ համար, այլ իր պրոլետարական պետության համար: Գյուղացին կոլխոզում աշխատում և իր համար: Վոչ վոք կոլխոզնիկների գլխին «կոմիսարներ» չինշանակում: Արտելը կառավարվում և ընտրված մարդկանցով — արտելի վարչությունով: Կոլխոզի անդամը վոչ միայն ընտրում և վարչություն, այլ և կարող և ցույց տալ վարչության պակասությունները՝ յեթե նա վատ և աշխատում: Նա կարող և, յերբ հարկավոր և, վճնտել վատ վարչությունը և ընտրել նորը: Նա մասնակցում և

ընդհանուր ժողովուժում տնտեսությունը վարելու պլանը կազմելու մեջ: Վերջապես նա կարող ե հեռանալ արտելից, յեթե նրան դուր չի գալիս, և նորից աշխատել առանձին:

Արտելային աշխատանքը այսօր չի հնարված: Յե՛վ դա հնարել են հենց իրենք գյուղացիները: Վոչ մի ժամանակ գյուղացիները չեն գնում դրսում աշխատելու միայնակ: Յե՛վ աշխատանքը դժվարին կլիներ և՛ խողելինը վարձելու ժամանակ հեշտ կարող եր խաբել նրանց: Յե՛վ ատաղժագործները, և՛ անտառ կտրողները միշտ գնում են աշխատելու արտելներով, ունենալով իրենց ընտրովի գլխավորներին: Արտելներով են աշխատում նաև տնայնագործները: Ինչո՞ւ չի կարելի արտելով վարել հողագործական տնտեսությունը: Վախենում են արտելից միայն կուլակները, վորովհետև արտելի տնտեսության դեպքում վերջանում են նրանց ուրախ օրերը: Դրա համար ել նրանք ասեն կերպ վախեցնում են գյուղացիներին և համոզում, վոր չմտեն կոլխոզները: Կուլակներին հավատալը ոգուտ չունի:

Դժբախտաբար մեզանում հաճախ տեղի յեն ունենում ծռումներ և աղավաղումներ արտելի գործերը վարելիս: Մե՛ջ ե ընկնում մի վորևե «մեծավոր» պաշտոնաթող քյալագյոզներից և սկսում ե մտցնել իր կարգերը՝ ուշադրություն չդարձնելով վոչ մի բանի վրա: Այս տեսակ «մեծավորին» հարկավոր ե սիայն ժամանակին կանգնեցնել, վեշը քաշել: Վոչ կուսակցությունը և վոչ ել կառավարությունը չեն ուզում բռնանալ արտելի անդամների վրա: Կուսակցությունը և կառավարությունը ցանկանում են, վոր արտելը ինքը կառավարի իրեն, վոր արտելի անդամները իրենք կարգի գցեն արտելի տնտեսությունը:

ԻՆՉԻ՝ ՀԱՄԱՐ ԵՆ ՈՒՂԱՐԿՎԵԼ ԳՅՈՒՂԸ ՔՍԱՆՀԻՆԳ- ՀԱԶԱՐ ԲԱՆՎՈՐՆԵՐ

Կանոնադրության համաձայն արտելի գործերը վարում են ընդհանուր ժողովը և վարչութիւնը: Ընդհանուր ժողովը արտելի գործավարության բարձրագոյն մարմինն է: Նա յե ընտրում վարչութիւն, վերաստուգիչ հանձնաժողով, հաստատում է հաշիւ-տվութիւնը և տնտեսութիւնը վարելու պլանները: Վարչութիւնը գործադիր մարմինն է: Նա իրագործում է ընդհանուր ժողովի վորոշումները և վարում է բոլոր ընթացիկ գործերը: Ընդհանուր ժողովը վոչ միայն ընտրում է վարչութիւն, այլ և հետևում է նրա աշխատանքներին: Նա կարող է փոխել վարչության վորոշումները, կարող է վերընտրել վարչութիւնը: Բայց յեղել են դեպքեր, յերբ կանոնադրութիւնը խախտվել է այստեղ: Վարչութիւնը չի ընտրվել, այլ նշանակվել է: Նշանակված վարչութիւնը ուշադրութիւն չի դարձրել ընդհանուր ժողովի վորոշումների վրա: Այս բոլորը յեղել է և թույլ է տրվել արտելի անդամների անգիտութիւնից: Արտելի ամեն մի անդամ պիտի իմանա կանոնադրութիւնը, այն ժամանակ կարգազանցութիւնը կպակասի և վերջի վերջո իսպառ կչքանա:

— Իսկ ինչպցո՞ւ յեն քսանհինգհազարյանները: Կուսակցութիւնը գյուղ է ուղարկում բանվորներին: Ինչո՞ւ յե ուղարկում նրանց, կոմիսարութիւն անելո՞ւ:

Այս բոլորը կուլակային ասեկոսներ են: Բանվորները գալիս են կոլխոզները վոչ թե կարգադրութիւններ անելու, այլ ոգնելու գյուղացիներին՝ կարգի գցելու նոր և դժվար գործը:

Ընկ, Կալինինը պատմում է մի կոլխոզնիկի մասին.
«Յերբ կոլխոզը փոքր էր, — ասել է կոլխոզնիկը, — յես
ինձ լավ եյի զգում, իսկ այժմ կոլխոզը մեծացել է և
ինձ թվում է վոր իմ գլուխս փոքրացել է»։ Այն
բանվորները, վորոնք գալիս են քաղաքից կոլխոզները,
ավելի մեծ փորձառություն ունեն տնտեսություն
կազմակերպելու մեջ, քան գյուղացիները, վորոնք
սովոր են վարել մանր անհատական տնտեսություն.
Նրանք պետք է իրենց փորձառությունից բաժին հաս-
ցնեն գյուղացիներին, դրա համար էլ կուսակուցթյունը
նրանց ուղարկում է կոլխոզները։

ԶԲԱՎՈՐՆԵՐԸ ՅԵՎ ԲԱՏՐԱԿՆԵՐԸ ԿՈՒՆՈՋՆԵՐՈՒՄ

— Այս բոլորը ճիշտ է; — համաձայնվում է գյու-
ղացին, — բանվորների մասին չենք վիճում։ Բայց
ինչո՞ւ համար են կոլխոզներում կազմակերպում չքա-
վորներին։ Մենք այժմ բոլորս հավասար ենք, բոլորս
կոլխոզնիկներ ենք։ Չկան վոչ չքավորներ և վոչ բա-
րակներ։

Ճիշտ է, վոր արտելում բոլորը հավասար են։ Վոչ

Կուլակներին, ճիշտ է, չեն ընդունում, բայց ար-
տելի մեջ բաարակների, չքավորների և միջակների
հետ միասին մտնում են ունեւորները։ Միանգամից
հավասարեցնել նրան չի կարելի, դրա համար էլ կոլխոզ-
ներում տեղի կունենա կոխվ չքավորների և ունեւոր-
ների մեջ։ «Սխալ էլ ինի կարծել, — ասում է
ընկ. Ստալինը, — վոր յեթե կոլխոզները կան,
ուրեմն կան բոլոր անհրաժեշտ պայման-
ներ ըսոց իսկիցմի համար։ Վոչ, գեռ ևս
յերկար պիտի աշխատել, վորպեսզի գյու-

դացի ~ կոլխոզնիկին փոխես և դարձնես
նրան սոցիալիստական հասարակության
աշխատավոր».

Զպետք է մոռանալ, վոր դեռ շատ կուլակներ
հեռացված չեն կոլխոզներից: Բացի այդ, ամեն մի
կոլխոզում կարելի չե ճարել կուլակներին ձայնակցող
բավականաչափ մարդկանց: Յեթև բառերակները և
չքավորները չկազմակերպվեն, արտելը պար կգա
ունևորների և կուլակների դուռուկով:

ԱՌԱՋ ԵՆՔ ԳՆՈՒՄ, ԹԵ ՅԵՏ

Հենց վոր յերևան յեկավ ընկ. Ստալինի հայտնի հոդ-
վածը, — «Դիսապտույտը հաջողություններից», հենց
վոր տեղի ունեցավ կուսակցության կենտկոմի հայտնի
դիմումը, — իսկույն սկսվեցին կուլակային ասեկոսե-
ները: Կուլակները, նրանց պոչերը, իրավագուրկները
և տերտերները, նախկին սպիտակ ոֆիցերները և այժմյան
սաբոտաժնիկները՝ բոլորը մի բերան սկսեցին յերգել.

— Սա, մենք տարանք հաղթությունը: Կոլխոզ-
ները վերացրել են: Կովերը յետ են տալիս:

Վոչինչ, յեթե միայն կուլակները և նրանց պոչերը
այսպես խոսեյին: Յեվ անդիտակից բանվորները և
վոմանք հենց կուսակցության մեջ վորձում են խոսել
այն մասին, վոր կուսակցությունը, վորպես թե, յետ է
նահանջում:

Ճիշտ է այդ: Իսկապես ծռումների դեմ կռվելը
նշանակում է յետ դնալ: Ինչիցն է հրաժարվել կու-
սակցությունը:

Ի՞նչ եր ուզում կուսակցությունը: Նախ՝ կոլխոզ-
ների մասսայական կազմակերպություն, իսկ այնտեղ

վորտեղ հնարավոր ե, նաև համատարած կոլեկտիվա-
ցում, գյուղատնտեսական արտելի հիման վրա:

Յանկացել ե արդյոք կուսակցությունը ստեղծել
ամատարած կոմունաներ, հանրայնացնել հավերն ու
խրճիթները: Վոչ:

Կուսակցությունն ասել ե, վոր գյուղատնտեսական
արտելը ներկա մոմենտում հանդիսանում ե կոլխո-
զային շարժման հիմնական ողակը: Այժմ իրագործ-
վում ե գյուղատնտեսական արտելի նոր կանոնադրու-
թյունը, ուղղվում են այն բոլոր վորձերը, վոր ար-
վել են՝ փոխարինելու արտելի կանոնադրությունը
կոմունայի կանոնադրությամբ:

Ինչիցն ե յերևում, վոր յետ ենք գնում:

Իսկ կուլակները և նրանց պոչերը պոռում են.

— Այ, կոմունայից հրաժարվում են:

Բայց ախր կուսակցությունը, հանձնարարելով
կոմունան, վոչ վորքի վզին՝ զոռով չի փաթաթել այն:
Այդպես և բոլոր հարցերում: Խոչալես ե գնում
կուսակցությունը կուլակի հարցը: Կուսակցությունն
ասում ե, կուլակին, վորպես դասակարգի, պետք ե
վոչնչացնել: Կուլակին վոչ միայն պիտի սահմանա-
փակել, այլ ամբողջովին վերացնել, վորպես դա-
սակարգի:

Ի՞նչ ե նշանակում այդ:

Միթե դա նշանակում ե, վոր կուլակին պետք ե
վոչնչացնել հենց այս բուպեյիս, այս վայրկյանիս:


Մեր կուսակցությունը չեք կարող լինել ահագին
յերկրի առաջնորդողը, չեք կարող ղեկավարել բազմա-
միլիոն բանվոր դասակարգը և գյուղացիությունը,
յեթե այդպես մոտենար հարցին:

Բայց, խոսելով կուլակուլթյան վերացման մասին, վորպես դասակարգի վերացման մասին, կուսակցությունը շեշտել է, վոր հենց մեր հաջողություններն են կոլխոզային շինարարության մեջ խլում կուլակի վոտի տակից հողը:

Հրաժարվել է արդյոք կուսակցությունը իր այդ վերաբեմունքից դեպի կուլակը, կուլակին սահմանափակելուց, նրան, վորպես դասակարգի, վոչնչացնելու նպատակից: Վոչ, չի հրաժարվել է, իհարկե, չի հրաժարվի:

Դրա համար ել ասել, վոր կուսակցությունը ուղղելով ծռումները, յետ է գնում, նշանակում է չհասկանալ կուսակցության քաղաքականությունը: Սհաթե ինչ է ասում ընկ. Ստալինը ծռումների դեմ կռվելու մասին իր «Պատասխան կոլխոզնիկ ընկերներին» հոդվածում:

— «Մենք ուզում ենք, վոր այն մարդիկ, վորոնք կատարել են սխալներ ու ծռումներ, յետ կանգնեն իրենց սխալներից: Մենք ուզում ենք, վոր քալլագոյողները իրենց քալլագոյողությունից անցնեն լենինիզմի դիրքերը: Մենք ուզում ենք այդ, վորովհետև միայն այդ պայմանով կարելի է ինի իսկապես շարունակել արշավանքը մեր դասակարգային թշնամու դեմ: Նշանշակում է դա, վոր մենք յետ ենք գնում: Իհարկե, վոչ: Դա նշանակում է, վոր մենք ուզում ենք վարել կանոնավոր արշավանք և վոչ թե՛ քալլագոյողական հիմարություն»:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոժար կամքով	3
Կուսակցության քաղաքականությունը չի փոխվել	6
Հոգի հասարակական մշակման ընկերություն, գյուղատնտեսական արտել և գյուղատնտես կան կոմունա	8
Կոլխոզների առավելությունները և ոգուտները	11
Կուլակները դեմ են կոլխոզներին	14
Ուլքեր են ընդունվում արտել	15
Կուլակին կոլխոզ չթողնելը քիչ է, նրան պետք է նաև ապակուլակացնել	16
Հանրայնացնել արտադրություն միջոցները	18
Բանող անասունի և ինվենտարի հանրայնացումը	20
Կոլխոզի անդամները կարող են ծախել իրենց տնտեսությունից ավելցուկները	23
Կոլխոզի անդամները կարող են դավանել ինչ կրոն ուղում են	24
Առանց անբաժանելի ֆոնդի արտել չի կարելի ստեղծել	25
Կոլխոզիկների կայքի մը մասն է անցնում անբաժանելի ֆոնդին	27
Ագարակներին կից հողերը	33
Կազմակերպված աշխատանքը արտելի հիմքն է	33
Աշխատավարձը արտելներում	36
Աշխատանքի դիսցիպլինի մասին	40
Կոլխոզը սարկություն տեղ չե	42
Ինչո՞ւ համար են ուղարկվել գյուղը քսանհինգհազար բանվորներ	44
Չքավորները և բատրակները կոլխոզներում	45
Առաջ ենք գնում, թե յետ	46

ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0038675

12 400.

С. Х.

А 3866



М. КОЗЫРЕВ и И. КРЕМЛЕВ-СВЕН
О чем говорит новый устав
сел.-хоз. артели
(перевод с русск.)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР
Москва, центр, Никольская, 10.